ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 սեպտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

128
(2978)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԼԽ. ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԴԻՊԼՈՄԻ ՖՈՆԻՆ «ԼԻՍԿԱՅԻ» ԴԻՄԵՐՏԱՅԻՆ ԼՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔ ԷՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բացահայտ հանցանք որակված գործին, որն անմիջական առնչություն ունի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ, այդպես էլ պատշաճ պատասխան չեն տալիս:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը, նշանակվելով ՀՀ բարձր պաշտոնի, որոշել է նոր մասնագիտություն ձեռք բերել, բայց կրթական ողջ գործընթացը խիստ կասկածահարույց է: Նա պրակտիկա է անցել իր ղեկավարած հիմնարկությունում, ինչը, ըստ մասնագետների, քրեական բնույթի հանցագործություն է: «Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով դիմեց ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին, որը Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցերին ավելի շատ է լինում, քան տիրապետում է սեփական ոլորտի խնդիրներին: ԿԳՄՍՆ-ից ստացանք հետեւյալ պատասխանը. «Համաձայն «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը իր իրավասությունների եւ ակադեմիական ազատությունների շրջանակում ինքնուրույն է ուսումնական գործընթացի (այդ թվում նաեւ նրա անբաժանելի մասը կազմող պրակտիկաների) կազմակերպման եւ սովորողների ընթացիկ ատեստավորման ձեւերի, կարգի եւ պարբերականության ընտրության հարցերում: Բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների ուսանողների պրակտիկան կազմակերպվում է տվյալ հաստատության կողմից հաստատված կարգի համաձայն: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն՝ Ձեր հարցումն ուղղել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն՝ որպես հայցվող տեղեկատվության տնօրինողի», - ասված էր գրությունում: Հետաքրքիրն այն է, որ հենց հարցման մեջ նշել էինք, որ ԳԱԱ-ին եւս դիմել էինք խնդրի վերաբերյալ, սակայն Գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան Ատոմ Մխիթարյանը մոտ 2 էջ հիմնավորում էր ուղարկել, որ բարձրաստիճան պաշտոնյա Դավիթ Առաքելյանի ուսումնական գործընթացի մասին որեւէ տեղեկություն չի կարող տրամադրել, քանի որ դրանք անձնական տվյալներ են:

ԳԱԱ-ի համար անձնական տվյալ է, ԿԳՄՍՆ-ի համար՝ անհասանելի. իսկ կրթությունը մեր բոլորի աչքի առջեւ հեղինակազրկվում է, պղծվում՝ դառնալով անիմաստ ժամանակի կորուստ: Հարցական է՝ բացի դպրոցների դասապրոցեսը, դասագրքային ոլորտը «պայթեցնելուց», Ժաննա Անդրեասյանի ղեկավարած հաստատությունը որեւէ այլ բանով զբաղվո՞ւմ է: «Նախկիններին» օրոք, երբ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը՝ Լիսկան, գիրք էր հեղինակում, թեկնածուական պաշտպանում, քննադատվում էր (որ լավ փնտրենք՝ Ժաննա Անդրեասյանն ու իր ամուսինն էլ ծաղրած կլինեն այդ փաստը), հիմա ինչպե՞ս է թույլ տալիս՝ իր նախարար եղած տարիներին պետական պաշտոնյաները պղծեն կրթական համակարգը: Մարդ, որ տարրական գրագիտության պրոբլեմ ունի, ազգային ակադեմիա է ավարտում, իսկ կրթության պատասխանատուն խոր անտարբերության մեջ է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի քրեական գործով մեղադրող դատախազ Էդգար Արսենյանը Անկախության օրվա առթիվ «Մխիթար Գոշ» մեդալով է պարգեւատրվել: Նկատենք, որ նա, չնայած դատարանում վկաների հարցաքննության փուլից է ներգրավվել այդ քրեական գործին, քանի որ Աննա Վարդապետյանը հեռացրել էր համակարգից մեղադրող նախկին դատախազ Արսեն Մարտիրոսյանին, բայց իշխող քաղաքական թիմը, անկախ գործի ելքից, Էդգար Արսենյանին «Մխիթար Գոշ» մեդալով է պարգեւատրել: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 21-ին՝ Անկախության տոնի 33 ամյակի առթիվ, հանրապետության նախագահի նստավայրում տեղի է ունեցել պարգեւատրման հանդիսավոր արարողություն. Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրերով գլխավոր դատախազության մի շարք աշխատակիցներ պարգեւատրվել են տարբեր մեդալներով:



Սամվել Բաբայանի «Միասնական հայրենիք»-ը վիժեցրել է Արցախի դեմ Ադրբեջանի հարձակման եւ արցախահայերի էթնիկ զտման օրը՝ սեպտեմբերի 19-ը Ցեղասպանության օր հռչակելու նախաձեռնությունը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախյան պատերազմի տարելիցի նախօրեին՝ սեպտեմբերի 18-ին, Արցախի պատգամավորները փորձել են Արցախի ԱԺ նիստ հրավիրել, իսկ օրակարգային միակ հարցը եղել է սեպտեմբերի 19-ը արցախահայերի դեմ իրականացվածը ցեղասպանության օր հռչակելը: Սամվել Բաբայանի «Միասնական հայրենիք» կուսակցության խորհրդարանական պատգամավորները, սակայն, նիստին չեն եկել ու քվորում չեն ապահովել, ինչի պատճառով նախաձեռնությունը տապալվել է: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Դավիթ Գալստյանը հաստատեց մեր տեղեկությունը՝ նշելով. «Անհասկանալի է՝ ինչու այդ խմբակցության պատգամավորները չներկայացան նիստին, պատճառները հայտնի չեն, ընդ որում՝ իրենց պատգամավորներից մեկը նախագծի համահեղինակն է: «Միասնական հայրենիք»-ից միայն ԱԺ փոխնախագահ Գագիկն Բաղունցն էր ներկա, ով եկել էր նիստը անցկացնելու համար, բայց 17 պատգամավոր չհավաքվեց, քվորում չեղավ»,- ներկայացրեց Արցախի ԱԺ պատգամավորը: «Միասնական հայրենիք» խմբակցության պատգամավոր Մարսել Պետրոսյանն էլ մեզ հետ զրույցում ասաց. «Արցախի ԱԺ-ն հիմա ունի 32 պատգամավոր, մեր խմբակցությունը 8 պատգամավոր ունի, իսկ 17 պատգամավորի ներկայության դեպքում կարող էին քվորում ապահովել. ո՞ւր էին մյուս պատգամավորները: Իհարկե, կարելի է ամեն ինչ «Միասնական հայրենիքի» վրա բարդել.... Թող իրենք հավաքվեն, 17 պատգամավորով քվորում ապահովեն: Ես տեղյակ էլ չեմ եղել, որ նիստ է լինելու, կարող է զանգել են, ես չեմ նկատել», - ասաց նա:

«Ժողովուրդ» օրաթերթին խիստ ուշագրավ հանգամանքներ են հայտնի դարձել օրերս մեծ «շուքով» բացահայտված իշխանության յուրացման գործով: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն, իշխանությանը հեռացնելու համար հավաքագրված անձանցից ոմանք իրենց հետ կատարվածի մասին, թե իբր գումարի դիմաց իրենց տարել են վարժանքների, որ «հետո իշխանությանը մաքրեն», պատմել են ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանին: Սյունեցի պատգամավոր Խաչատրյանը, լսելով տեղեկությունը, այն հասցրել է ուժային կառույցներին: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այն անձինք, ովքեր կատարվածի մասին անձամբ պատմել են ՔՊ պատգամավորին, նրանց խոստացել են քրեական պատասխանատվության չենթարկել, գործերը կարճել: Այս տեղեկությունը «Ժողովուրդ օրաթերթը փորձեց պարզել ՔՊ-ական պատգամավոր Արմեն Խաչատրյանից, սակայն նա չարձագանքեց մեր զանգերին, եւ երկար ժամանակ է՝ անպատասխան է թողնում մեր նամակները: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 18-ին ՀՀ քննչական կոմիտեն հայտնեց, որ Ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ են ստացվել՝ մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու մասին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՌԱԲԼՈՒՐ ՉԱՅՑԵԼԵՑԻՆ

Կիրակի՝ սեպտեմբերի 22-ին, Մարզահամերգային համալիրում տեղի է ունեցել «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հավաքը, որին մասնակցել են Սրբազան պայքարի աջակիցները:

Մարզահամերգային համալիրի դիմաց «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի ԱԺ նախկին նախագահ Աշոտ Ղուլյանի հետ:

-Պարոն Ղուլյան, սեպտեմբերի 19-ին լրացավ Արցախի հայաթափման մեկ տարին: Այդ օրը Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներից ոչ ոք այդպես էլ չայցելեց Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու. սա ի՞նչ էր: Փորձում են մոռացությա՞ն տալ եւ փակե՞լ Արցախի էջը:

-Երեւի ճիշտ կլինի իրենց հարցնել, քանի որ դա որեւէ առողջ տրամաբանության ենթակա չէ: Սա նույն դիրքորոշման շարունակությունն է՝ ինչ եղել է այս մեկ տարվա ընթացքում: Երեւի զարմանալու բան էլ չկա:

-Ինչ Արցախի իշխանությունները տեղափոխվել են այստեղ, փորձե՞լ են կապ հաստատել Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ, նրանց միջեւ որեւէ հանդիպում եղե՞լ է այս ընթացքում:

-Հստակ ասել չեմ կարող, ճիշտ կլինի իշխանության անդամներին հարցնել: Որքան հիշում եմ՝ Արցախի նախագահը վերջին շրջանում երկու անգամ խոսել է այդ մասին՝ նշելով, որ որեւէ շփում կամ հանդիպում չի եղել:

-Պարոն Ղուլյան, Արցախի պատգամավորները հայտարարել էին, որ սեպտեմբերի 18-ին փորձել են նիստ գումարել եւ ամսի 19-ը հռչակել Ցեղասպանության օր, սակայն Սամվել Բաբայանի կուսակցությունը տապալել է դա. որեւէ տեղեկություն ունե՞ք սրա վերաբերյալ:

-Անմիջապես հաստատել կամ հերքել չեմ կարող, նյութին տեղյակ եմ Ձեզ պես՝ մամուլից: Գիտեմ, որ նման փորձ եղել է, բայց թե ինչու նիստը չի կայացել եւ ինչ պատճառաբանություններով, տեղյակ եմ մամուլում տեղ գտած լուրերից միայն: Գաղափարը, որ Արցախի հայաթափումը պիտի տեղ ունենա մեր կյանքում, փաստ է, քանի որ այդ նույն տեղահանվածները, որոնց մի ստվար հատված էլ ապրում է Երեւանում շարունակում է ապրել այդ ծանր հիշողությունների ներքո, եւ դրան որեւէ կերպ չարձագանքելը ճիշտ չէ:

Հիշեցնենք, որ կիրակի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացել է «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման կազմակերպած մեծ հավաքը:

Շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը ավելի վաղ հայտարարել էր, որ սա կարեւոր հավաք է եւ կոչ էր արել քաղաքական ուժերին բռունցքվել, համախմբվել:

Նա նաեւ ասել էր, որ այս հավաքով սկիզբ է դրվում պայքարի վճռական փուլին, որին անդրադառնալով՝ Սրբազանը հայտնել է. «Մեր պայքարի ակտիվ շրջանը վերսկսում ենք հոկտեմբերի 2-ին. ժամը 18:30 ին հավաքվում ենք Հանրապետության հրապարակում»:

«Մտնում ենք պայքարի ինտենսիվ եւ հետեւողական փուլ, համառ, աննահանջ, համբերատար պայքարի փուլ՝ հաղթանակով երաշխավորված:

Բոլոր անհաջողությունները, թերացումներն ու սխալներն իմն են, բացառապես իմը, իսկ հաղթանակը՝ ձերը եւ միայն ձերը», - հայտարարել էր նա՝ նշելով, որ Հայաստանը պետք է ունենա լեգիտիմ իշխանություն, որը հանդես կգա երկրի ազգային եւ պետական շահերի դիրքերից:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՁԱԽՈՂՎՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ

Անկախության 33-րդ ամյակին իշխանության ոչ մի օղակ այդպես էլ չայցելեց Եռաբլուր, սակայն խրախճանքի երեկո կազմակերպեցին Հանրապետության հրապարակում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը սեպտեմբերի 21-ին, փոխանակ անկախության համար մարտնչած մարտիկների շիրիմին հարգանքի տուրք մատուցելու, ժամանել էին Հայաստանի պատմության թանգարան՝ մասնակցելու «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով միջազգային ցուցահանդեսի բացմանը:

Ձախողելով Անկախության տոնը՝ փաշինյանական ընտանիքը ցուցահանդեսից հետո տեղավորվեց ռեստորաններից մեկում, ապա սկսեց ողջագուրվել անցորդների հետ. այնինչ Եռաբլուրից սգի ձայն էր լսվում:

Ձախողելով անկախության տոնը եւ չկազմակերպելով պետական որեւէ տոն՝ Փաշինյանն ու կինը հաջորդ օրն իսկ լքեցին Հայաստանը: Նիկոլ Փաշինյանն ու կինը նախ մեկնեցին Հայաստանից Բրյուսել, ապա Բրյուսելից Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Հայաստանի պատվիրակությունն Ամերիկայում կլինի (խմբ.) սեպտեմբերի 22-27-ը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 28-ին Մյունոնօրհնեքի արարողությունն է լինելու, իսկ սեպտեմբերի 29-ը Էջմիածնի մայր տաճարի օծման արարողությունն է տեղի ունենալու: Այսինքն՝ Փաշինյանը կամ կգնա, կամ կպատճառաբանի, որ ԱՄՆ-ից նոր է վերադարձել:

Ստացվում է, որ վարչապետ Փաշինյանն ամեն բան անում է եկեղեցու հետ որեւէ կապ չունենալու համար եւ շրջանցում է գրեթե բոլոր պետական տոները:

Իսկ նախկինում Հայաստանի Անկախության տոնը նշվում էր մեծ շուքով, զինվորական էլիտայի քայլերթով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՅԱԶԳԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

«Ֆրանսիայի նոր կառավարությունում ընդգրկվել են երկու հայազգի նախարարներ». հայտնում են ֆրանսիական լրատվամիջոցները:

Մասնավորապես, Աստրիդ Փանոսյան-Բուվենը դարձել է աշխատանքի եւ զբաղվածության նախարար, իսկ Գիյոմ Կասպարյանը նշանակվել է քաղաքացիական ծառայության, հանրային գործունեության պարզեցման եւ վերափոխման նախարար:

Աստրիդ Փանոսյանը Ֆրանսիայի Ecole Suprieure de Commerce-ի եւ Փարիզի Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի IEP-ի շրջանավարտ է: Հայազգի ֆրանսուհին մագիստրոսի կոչում է ստացել պետական կառավարման ոլորտում Հարվարդի համալսարանում:

Փանոսյանը ֆրանսիական Groupama խոշոր ապահովագրական ընկերության գլխավոր քարտուղարն էր: 2015 թվականից նա ֆրանս-հոլանդական անշարժ գույքի Unibail-Rodamco ընկերության գործադիր տնօրենն է:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 219

ՀՀ Ազգային ժողովում ունեցած ելույթի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր. «Հայաստանում նոր ատոմակայան կկառուցվի, բանակցություններն արդեն սկսվել են»:

Իրական պատկեր. Հայաստանում ատոմակայանի կառուցումը խոսակցություններից այն կողմ չի անցել: Գործնական որեւէ քայլ չի արվել այս ընթացքում նոր ատամոկայան կառուցելու վերաբերյալ: Ավելին՝ Ադրբեջանի նախագահը սկսել է թարմացնել իր սպառնալիքները՝ այս անգամ էլ պահանջելով փակել մեր գործող ատոմակայանը:

Շարունակությանը կարող եք հետեւել «ԱրմԼուր» լրատվական կայքում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՆԻՍՏԵՐ ԿԳՈՒՄԱՐԵՆ

Այս շաբաթ ԱԺ գլխադասային հանձնաժողովները նիստեր կգումարեն:

ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստը տեղի կունենա այսօր՝ սեպտեմբերի 24-ին՝ ժամը 11:00-ին: Այսօր նիստ կգումարի նաեւ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նիստը կգումարվի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին:

Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստ կիրավիրվի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 11:00-ին:

Սեպտեմբերի 26-ին՝ ժամը 13:30-ին նիստ կգումարի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը:

Սեպտեմբերի 27-ին՝ ժամը 11:30-ին կկայանա պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստը տեղի կունենա սեպտեմբերի 30-ին՝ ժամը 09:30-ին:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՄԱՆ Է ԳՆՈՒՄ

Ադրբեջանի համար թիվ մեկ առաջնահերթությունն է ռազմական հզորության ավելացումը: Այս մասին հայտարարել է այդ երկրի նախագահ Իլհամ Ալիեւը՝ ելույթ ունենալով Միլի Մեջլիսում:

«Աշխարհում տեղի ունեցող գործընթացները, նոր կոնֆլիկտային օջախների ի հայտ գալը, պատերազմներն ու մեր շուրջ լարվածության աճը, Հայաստանում ռեւանշիստական միտումները մեզ ստիպում են անընդհատ ուշադրություն դարձնել ռազմական հզորության հարցին», - ասել է նա:

ԷՐԴՈՂԱՆԸ ԿԲԱՆԱԿՑԻ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային մասնակցելու նպատակով ԱՄՆ կատարած այցի շրջանակում բանակցություններ կվարի Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Այս մասին հայտնում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

Էրդողանը երկկողմ հանդիպումներ կունենա աշխարհի բազմաթիվ առաջնորդների հետ: Նրանց թվում են Իրաքի վարչապետ Մոհամմեդ Շիա ալ Սուդանին, Նիդեռլանդների վարչապետ Դիկ Սխուֆը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին, Քուվեյթի թագաժառանգ շեյխ Սաբահ Խալեդ Ալ-Համադ Ալ-Սաբահը, Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը, Ալբանիայի վարչապետ Էդի Ռաման եւ Սերբիայի նախագահ Ալեքսանդր Վուչիչը:

ԹՐԱՄՓԸ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՉԻ ԱՌԱՋԱԴՐՎԻ

ԱՄՆ հանրապետական կուսակցության նախագահի թեկնածու Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ եթե պարտվի նոյեմբերի 5-ին կայանալիք ընտրություններում, ապա այլեւս չի առաջադրվի այդ պաշտոնի համար: Այս մասին նա հայտնել է Շերիլ Աթկինսոնի Full Measure հաղորդման ժամանակ:

Հաղորդավարուհին 78-ամյա նախկին նախագահին հարցրել է՝ արդյոք նա չորս տարուց նորից կպայքարի Սպիտակ տան ղեկավարի պաշտոնի համար, եթե երրորդ ընտրապայքարում հաջողության չհասնի:

«Ոչ: Կարծում եմ՝ սա կլինի վերջինը... Հուսանք, որ մենք հաջողության կհասնենք», - ասել է Թրամփը:

Դոնալդ Թրամփը եւ դեմոկրատների թեկնածու Քամալա Հարրիսը գրեթե հավասար շանսեր ունեն հաղթելու:

ԵՐԿԻՐԸ ԼՔԵԼՈՒ ԿՈՉ

ԱՄՆ Պետդեպարտամենտը Իսրայելի եւ Լիբանանի «Հեզբոլլահ» շարժման միջեւ հակամարտության սրման պատճառով շաբաթ օրը Լիբանանում գտնվող ամերիկացիներին կոչ է արել լքել երկիրը, քանի դեռ կոմերցիոն թռիչքների հնարավորություններ կան:

««Հեզբոլլահի» եւ Իսրայելի միջեւ շարունակվող հակամարտության անկանխատեսելի բնույթի եւ Լիբանանում, ներառյալ՝ Բեյրութում տեղի ունեցած վերջին պայթյունների պատճառով, ԱՄՆ դեսպանությունը կոչ է անում ԱՄՆ քաղաքացիներին լքել Լիբանանը, քանի դեռ կոմերցիոն թռիչքների տարբերակներ կան», - ասվում է ԱՄՆ Պետդեպարտամենտի թարմացված ուղեցույցում:

Գերատեսչությունից հայտնել են, որ ներկայումս գործում են կոմերցիոն թռիչքներ, բայց սահմանափակ տարողությամբ:

«Եթե անվտանգության իրավիճակը վատթարանա, կոմերցիոն թռիչքների տարբերակները կարող են անհասանելի դառնալ», - ասվում է հաղորդման մեջ:

ԵՌՕՐՅԱ ՍՈՒԳ

Իրանի Հարավային Խորասան նահանգում 3-օրյա սուգ է հայտարարվել ածխահանքում գազի պայթյունի հետեւանքով 52 հանքափորի զոհվելուց հետո, հայտնում է Mehr գործակալությունը:

Հայտնի է, որ Հարավային Խորասանի Թաբաս քաղաքի ածխահանքում մեթան գազի պայթյունը տեղի է ունեցել կիրակի երեկոյան՝ տեղական ժամանակով ժամը 21:00-ի սահմանում Madanjo ընկերության հանքավայրում՝ ազդելով երկու բլոկի՝ B եւ C-ի վրա, որտեղ աշխատում էր 69 մարդ:

Մեկ ժամ առաջ ավարտվել են փրկարարական աշխատանքները B բլոկում, որտեղ աշխատող 47 մարդուց 30-ը զիվել են, 17-ը՝ վիրավորվել: C բլոկում, որտեղ արգելափակված էր 22 բանվոր, բոլորը մահացել են:

Ածխահանքը գտնվում է գետնի տակ 250 մետր խորության վրա եւ ունի 700 մետր երկարություն:

Թաբասի ածխահանքը, որն ունի ավելի քան 30,000 քառակուսի կիլոմետր տարածք, Իրանի ամենամեծ եւ ամենահարուստ ածխային շրջանն է:

ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ

ԿԱՆԱԴԱՆ «ԽՈՍՈՒՄ» Է ՀՕԳՈՒՏ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ

Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի জոլին Արցախի հայաթափման առաջին տարելիցի կապակցությամբ հանդես է եկել հատուկ հայտարարությամբ: Վերջին շրջանում Հայ դատի Կանադայի հանձնախումբը դաշտոնական ակտիվ հաղորդակցության մեջ է եղել նախարար জոլիի հետ: Հայտարարության մեջ տեղ գտած ձեւակերդումները լիովին համադասախանում են Հայ դատի Կանադայի հանձնախմբի քաղաքական առաջնահերթություններին:

Թարգմանաբար ներկայացնում ենք նախարար জոլիի հայտարարությունը:

«Անցյալ շաբաթ լրացավ մեկ տարին, երբ Ադրբեջանը սանձազերծեց ռազմական գործողություն Լեռնային Ղարաբաղում՝ դարեր շարունակ էթնիկ հայերով բնակեցված տարածաշրջանում: Այս գործողության հետեւանքները ծանր էին, դրա արդյունքում ավելի քան 100.000 խաղաղ բնակիչներ, այդ թվում՝ 30.000 երեխաներ, բռնի տեղահանվեցին Հայաստան՝ երկրում առաջացնելով մարդասիրական կարիքների արագ աճ:

Ադրբեջանի կողմից չարդարացված ռազմական գործողությանը նախորդել էր Լաչինի միջանցքով մարդասիրական ապրանքների անցման իննամսյա շրջափակումը, ինչը խախտել էր Արդարադատության միջազգային դատարանի ժամանակավոր միջոցի կիրառման մասին որոշումը:

Կանադան համերաշխ է այս ճգնաժամից տուժած մարդկանց հետ եւ երախտապարտ է Հայաստանին իր դռները բացելու համար: Այդ իսկ պատճառով 2023 թ. մենք ավելի քան 3.9 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն ենք հատկացրել Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակից բխող հրատապ կարիքները լուծելու համար:

Կանադան շարունակում է կոչ անել եւ աջակցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ համապարփակ խաղաղության պայմանագրի կնքմանն ուղղված բովանդակալից բանակցություններին, ինչպես նաեւ կողմերի միջեւ երկխոսության եւ վստահության ամրապնդման միջոցառումների շարունակմանը՝ այս տարածաշրջանի ժողովրդի համար արդար եւ տեւական խաղաղության համար:

Կանադան բազմիցս կոչ է արել անվերապահորեն ազատել 2020 թ. Ղարաբաղյան պատերազմի բոլոր հայ ռազմագերիներին: Մենք նաեւ շարունակում ենք կոչ անել ազատ արձակել Ադրբեջանից կամայականորեն ձերբակալված բոլոր էթնիկ հայերին:

Կանադան աջակցում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բանակցային քաղաքական լուծմանը եւ աջակցում է ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության հարգման սկզբունքներին եւ ինքնորոշման իրավունքին՝ այս տարածաշրջանի ժողովրդի համար արդար եւ տեւական խաղաղության հասնելու բանակցություններում: Սա պետք է ենթադրի հայ խաղաղ բնակիչների վերադարձի անվտանգ եւ արժանապատիվ իրավունքը, երաշխավորի մարդու իրավունքների եւ քաղաքացիական կենսամիջոցների պաշտպանությունը եւ տարածքում հայկական մշակութային ու պատմական վայրերի պահպանումը»:

Հայ դատի Կանադայի հանձնախումբը շարունակելու է աշխատանքները Կանադայի ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության ներկայացուցիչների հետ՝ ղարաբաղյան հիմնախնդրի ներկա հանգրվանի շուրջ կանադական կողմի օբյեկտիվ դիրքորոշումները պահպանելու եւ զարգացնելու ուղղությամբ:

ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՅՔԱՐԸ ՎԵՐՍԿՍՎՈՒՄ Է ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ

Մեր պայքարի ակտիվ շրջանը վերսկսում ենք, հոկտեմբերի 2-ին՝ ժամը 18:30 ին, հավաքվում ենք Հանրապետության հրապարակում:

Այս մասին մարզահամերգային համալիրում մեկնարկած Սրբազան պայքարի հավաքի ժամանակ հայտարարել է Բագրատ Սրբազանը, ինչպես նշել էինք՝ Բագրատ Սրբազանը հայտարարել է՝ «Մտնում ենք պայքարի ինտենսիվ եւ հետեւողական փուլ, համառ, աննահանջ, համբերատար պայքարի փուլ՝ հաղթանակով երաշխավորված:

Բոլոր անհաջողությունները, թերացումներն ու սխալներն իմն են, բացառապես իմը, իսկ հաղթանակը՝ ձերը եւ միայն ձերը»,- հայտարարել է նա:

«Հայաստանը պետք է լեգիտիմ իշխանություն ունենա, որը հանդես կգա երկրի ազգային եւ պետական շահերի դիրքերից: Պետք է ձեւավորենք նոր իշխանություն՝ ըստ արժանիքների, դառնալով հաշտության եւ բոլոր ունակների կառավարություն:

Պետք է վերացվեն այս իշխանության կողմից հանրության ներսում ստեղծված պետության եւ հասարակության դիմադրողականությունը քայքայող բաժանարար գծերը: Մենք կարող ենք եւ կոչված ենք վերականգնելու մեր ազգային համերաշխությունը», - հայտարարել է նա:

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՄՆ ՄԵԿՆԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ Կառավարությունից տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ սեպտեմբերի 22-27-ն Ամերիկայի Միացյալ Նահանգներում կգտնվեն նաեւ՝

Հայաստանի Հանրապետության վարչապետի տիկին Ա. Հակոբյանը,

ՀՀ առողջապահության նախարար Ա. Ավանեսյանը,

Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Լ. Մակունցը,

ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Մ. Մարգարյանը,

ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար՝Ն. Բաղդասարյանը,

ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պետ Գ. Վանոյանը,

ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ՝ Կ. Գասպարյանը,

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Խաչատրյանը,

ՀՀ վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնի արարողակարգային միջոցառումների պատասխանատու Ա. Մելքոնյանը,

«Իմ քայլը» հիմնադրամի փոխտնօրեն (համաձայնությամբ) Թ. Թերքմանը,

«Իմ քայլը» հիմնադրամի սոցիալական մեդիայի պատասխանատու Ս. Ասիլյանը,

Թարգմանիչ Գ. Կալոշյանը,

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության օպերատոր Ա. Աբրահամյանը,

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությանօպերատոր Ա. Շահինյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության լուսանկարիչ Տ. Մեհրաբյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՁԱՆԳԱՀԱՐԵԼ ԵՆ ՆԱԽԿԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻՆ

«ՄԱՐՏԻ 1-Ի» ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Մարտի 1»-ի վերաբացված գործով Հակակոռուպցիոն դատարանում երեկ նիստ էր ընթանում: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը չէր ներկայացել դատարան. դատավոր Մարգիս Պետրոսյանը հայտնեց, որ դատարանը չի կարողանում գտնել Ռոբերտ Քոչարյանին եւ զանգահարել են ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀԱՊԿ նախկին քարտուղար Յուրի Խաչատուրովը, ՀՀ ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը երկուշաբթի վաղ առավոտյան պետք է ներկայանան Հակակոռուպցիոն դատարան:

Ինչպես հայտնել էինք՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը բեկանել էր ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ԶՈՒ ԳՇ նախկին պետ, ՀԱՊԿ նախկին քարտուղար Յուրի Խաչատուրովի, ՀՀ ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանի, ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի վերաբերյալ քրեական գործը կարճելու մասին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի 2021թ. որոշումը: Վճռաբեկ դատարանի կայքի համաձայն՝ սեպտեմբերի 12-ին Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը բավարարել է ՀՀ նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի բողոքը՝ բեկանելով դատական ակտը եւ ուղարկելով գործը նոր քննության՝ Հակակոռուպցիոն դատարան:

Հիշեցնենք, որ 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին առնչվող՝ սահմանադրական կարգի տապալման գործով մեղադրյալի կարգավիճակում էին ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ ԶՈՒ նախկին գլխավոր շտաբի պետ, ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովը, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը եւ ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը: Յուրի Խաչատուրովը եւ Սեյրան Օհանյանը մեղադրվում էին սահմանադրական կարգը տապալելու համար, Ռոբերտ Քոչարյանը՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելու եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, իսկ Արմեն Գեւորգյանը՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելուն օժանդակելու, առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու համար:

ՍԴ-ի կողմից՝ 2021թ. մարտի 26-ին ՀՀ Քրեական օրենսգրքի (2003թ.) 300,1-րդ հոդվածը Սահմանադրության 78-րդ եւ 79-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչելուց հետո՝ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Աննա Դանիբեկյանի նախագահությամբ, սահմանադրական կարգի տապալման դրվագով կարճել էր քրեական գործը եւ դադարեցրել քրեական հետապնդումը՝ հանցադեպի բացակայության հիմքով, թեեւ դատախազները պահանջում էին վերաորակել արարքը: Դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Վճռաբեկ դատարանը դիմել էր ՍԴ՝ վիճարկելով Քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների Սահմանադրությանը համապատասխանելու հարցը: Խնդիրը 1998-ին ընդունված, այժմ մասնակի գործող Քրեական դատավարության օրենսգրքի 309.1 հոդվածի 3-րդ մասն էր, որը հնարավորություն չէր տալիս հոդվածը հակասահմանադրական ճանաչելուց հետո դատարանում վերաորակել մեղադրանքը: ՍԴ-ն որոշել է մասնակի բավարարել դիմումը՝ նշելով, որ թեեւ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը, այն մեկնաբանությամբ, որ ամբաստանյալին մեղսագրվող արարքը հակասահմանադրական ճանաչվելիս մեղադրողը կարող է մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը մեղադրյալի արարքում քրեական օրենքով նախատեսված այլ արարքի հատկանիշների առկայության պարագայում՝ անկախ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումից:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՍԴ որոշումը, որոշել է բավարարել դատախազության բողոքը:

Նշենք, որ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին մեղսագրվող մյուս դրվագով եւս քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով, եւ այժմ մեղադրյալի կարգավիճակ ունի միայն Արմեն Գեւորգյանը, իսկ գործը քննող դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները դադարեցվել են՝ իբրեւ Ռ. Քոչարյանի գործի ձգձգման պատճառով, ինչը հանգեցրել է գործի կարճման:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՎԹՄԱՆ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին փաստաբան Ռոման Երիցյանը հայտնեց.«Ստանձնել եմ Սերոբ Գասպարյանի հետ մեկտեղ իշխանության զավթման նախապատրաստության մեջ մեղադրվող, արցախյան քառասունչորսօրյա եւ քառօրյա պատերազմների ակտիվ մասնակից արցախցի Արմեն Մնացականյանի շահերի պաշտպանությունը: Հարազատների խնդրանքով ընդամենը իրազեկում եմ, որ վերջինս Ռոստովից Հայաստան էր ժամանել իր հարազատ եղբորորդու զոհվելու տարելիցին մասնակցելու նպատակով:

Միաժամանակ իրազեկում եմ, որ Արմեն Մնացականյանի հետ ապօրինի, խայտառակաբար եւ բռնի կերպով ձերբակալված նրա ընտանիքի անդամներն ու հարազատները նույն օրն ազատ են արձակվել: Ինչ վերաբերում է Արմեն Մնացականյանին կալանավորելու որոշմանը, ապա այդ կապակցությամբ հանդես կգամ լրացուցիչ հայտարարությամբ»:

Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրեն հասած տեղեկություններ համաձայն՝ ԱԱԾ-ի կողմից իշխանությունը յուրացնելու նախապատրաստության գործով կալանավորված անձանցից մեկն ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբայրն է՝ Սերոբ Գասպարյանը:

Նշենք, որ ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանը եւ նրա որդին զոհվել են հանուն հայրենիքի մղված մարտերում: Այս ցավալի եւ ողբերգական դեպքից հետո նրա եղբայրը՝ Սերոբ Գասպարյանը, պարբերաբար հարցազրույցներ է տալիս լրատվամիջոցներին եւ խոսում՝ ընդդեմ իշխանության:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության կողմից տեղեկություններ են ստացվել, որ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու մասին: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Բավարար փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ քաղաքացիներ Ս.Գ.-ն, Ա.Ե.-ն, Ա.Հ-ն, Ե.Ս.-ն, Ա.Ս-ն, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին բնակիչներ Ա.Մ.-ն Ա.Ս.-ն, ինքնությունները դեռեւս չպարզաբանված այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, կատարել են իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն, այն է՝ դիտավորությամբ ստեղծել են Հայաստանի Հանրապետության իշխանությունը զավթելու՝ բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով ՀՀ կառավարության լիազորություններին տիրանալու համար պայմաններ:

Նշված արարքը կատարելու համար քրեական հետապնդում է հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորված են են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌԴ-ՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՔՊ-ԱԿԱՆԸ

2 օր առաջ ՌԴ-ում կալանավորվել է հետախուզման մեջ գտնվող նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանը: Տեղեկությունը ArmLur.am-ին հաստատեցին ՀՀ ՆԳՆ-ից:

«Ռուսական կողմը մեզ տեղեկացրել է հետախուզվողին հայտնաբերելու մասին», - զրույցում հայտնեցին ՆԳՆ-ից:

Թաթուլ Ասիլյանը Հայաստանի կողմից հետախուզման մեջ է սույն թվականի մայիսի 31-ից:

ԸՆԹԱՑԻԿ

ՊԵԿ-Ը ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Պետական եկամուտների կոմիտեն Հայաստան ժամանող քաղաքացիներին հորդորում է Հայաստանի Հանրապետություն տեղափոխել միայն իրենց կողմից ձեռքբերված եւ իրենց պատկանող Apple ապրանքանիշի նոր iPhone 16 մոդելի բջջային հեռախոսներ:

Անհրաժեշտ է հրաժարվել այլ երկրների օդանավակայաններում բջջային հեռախոս տեղափոխելու առաջարկ անող քաղաքացիների խնդրանքներից, քանի որ վերջիններս եւ (կամ) իրենց՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվող ծանոթներն իրականացնում են քողարկված ձեռնարկատիրական գործունեություն, որում աննուղակի եղանակով կարող են ներգրավել նաեւ Ձեզ:

Փորձը ցույց է տալիս, որ հանգստի մեկնած քաղաքացիները, որոշ դեպքերում չկարողանալով մերժել այլ երկրների օդանավակայաններում իրենց մոտեցող հայրենակիցների խնդրանքները, իրենց հետ Հայաստանի Հանրապետություն են ներմուծում բջջային հեռախոսներ, այնուհետեւ փոխանցում իրենց անծանոթ այլ անձանց:

Միաժամանակ, կոմիտեն հայտնում է, որ մաքսային ծառայությունը, նշված հանգամանքով պայմանավորված, իրականացնելու է ուժեղացված մաքսային հսկողություն՝ զարտուղի ճանապարհներով առեւտրային նշանակության բջջային հեռախոսների Հայաստանի Հանրապետություն տեղափոխումը կանխարգելելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ավարտվել է 2024թ. փետրվարի 24-ին զինծառայող Ավագ Զաքարյանի մահվան դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Փաստերով հիմնավորվել է, որ նշված օրը՝ ժամը 17:55-ի սահմաններում, ՀՀ հյուսիսարեւելյան սահմանագծին տեղակայված մարտական դիրքում՝ խրամուղում, անձնական հարցերի շուրջ վիճաբանություն եւ քաշքշոց է առաջացել մարտական հերթապահության մեջ ընդգրկված զինծառայող, շարքային Ս.Պ.-ի եւ շարքային Ա. Զաքարյանի միջեւ:

Դրա ընթացքում Ս.Պ.-ն լիցքավորել է իրեն ամրակցված ԿՁԳ տեսակի գնդացիրը եւ նշան բռնելով Ա. Զաքարյանի վրա՝ մենահատ կրակոց է արձակել վերջինիս ուղղությամբ: Ստացած հրազենային վիրավորումից զինհոսպիտալ տեղափոխելու ճանապարհին՝ ժամը 18:05-ից-18:10-ի սահմաններում, Ա. Զաքարյանը մահացել է:

Զինծառայող Ս.Պ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ դատարան ուղարկելու հարցը քննարկելու համար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 20-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 193 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱԹԱՐՎԵԼ Է ՀԱՄԱԿԱՐԳԸ

Սահմանազատման անվան տակ միակողմանի կերպով Ադրբեջանին Կիրանց գյուղից տարածքներ հանձնելուց հետո խաթարվել են Կիրանցի խմելու եւ ոռոգման ջրի համակարգերը: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը սեպտեմբերի 18-ին որոշել է. «Հաշվի առնելով տարածաշրջանային կենսագործունեության բնականոն ընթացքի ապահովման անհրաժեշտությունը՝ թույլատրել ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմին անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրերի շրջանակում Իջեւան համայնքի Կիրանց բնակավայրի խմելու եւ ոռոգման համակարգերի կառուցման, Սարիգյուղ բնակավայրի խմելու ջրի կառուցման եւ Աճարկուտ բնակավայրի գյուղամիջյան կամրջի հենապատի կառուցման համար նախագծերի կազմման աշխատանքների ձեռքբերումն իրականացնել հրատապության կարգով»: Մարզպետը որոշել է այդ աշխատանքների գնումներն իրականացնել հրատապ՝ մեկ անձից գնում կատարելու ձեւով:

18 ՄԻԼԻՈՆ՝ ԴԻԼԻՋԱՆԻ ՏՈՆԸ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դիլիջան քաղաքի շատ փողոցներ փոսառատ, քարուքանդ են, բանուկ Սայաթ-Նովա փողոցն ընդհանրապես մայթեր չունի, հետիոտները հայտնվում են ավտոմեքենաների առաջ, քաղաքի բազմաբնակարան շատ շենքեր կոյուղու համակարգի անսարքության պատճառով վատթար վիճակում են, բազմահարկ շենքերից մեկը թեքված է, իսկ Դիլիջանի համայնքապետարանը ու ավագանին ավելի քան 18 միլիոն դրամ են հատկացրել քաղաքի 480-ամյակը նշելու համար: Սեպտեմբերի 13-ին համայնքի ավագանին միաձայն, 13 կողմով որոշել է 2024 թ. հոկտեմբերի 5-ին Դիլիջանի 480 ամյակին նվիրված միջոցառման կազմակերպման համար հատկացնել 18 միլիոն 360 հազար 600 միլիոն դրամ:

ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ

Սահմանազատման անվան տակ Ադրբեջանին հանձնված Կիրանցի բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող, կաղաստրից վկայական ունեցող ընդհանուր թվով 58 տների, հողերի համար պետական բյուջեից տրվել են դրամական փոխհատուցումներ: Հայտնի չէ, թե պետբյուջեի ո՞ր հոդվածներից, ի՞նչ սկզբունքով են հատկացվել այդ գումարները, որոշվել գումարների չափերը, դա արվել է կառավարության գաղտնի որոշմամբ: Այդ գործով զբաղվում է Տավուշի մարզպետարանը՝ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր Հայկ Ղալումյանի գլխավորությամբ: Մինչդեռ այդ հողերը ոչ միայն Կիրանցի բնակիչներին են պատկանում, այլ ՀՀ-ին, որի « հպարտ քաղաքացիների»՝ 3 միլիոն վարչապետերի կարծիքը վարչապետ Նիկոլ Փաշինյանը չի հարցրել, հաշվի չի առել: Ազատամարտում զոհված հարազատներ ունեցող Կիրանցի 11 ընտանիքներ համաձայն չլինելով հերոսների արյունով պաշտպանված հողերի հանձնմանը՝ հրաժարվել են դրամական փոխհատուցումից: Կիրանցից տեղեկացանք, որ նրանց թիվը նվազել, հասել է 7-ի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՀԱՋԱՆԳ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՄԻԱՅՆ ՕԼԻԳԱՐԽՆԵՐԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆ», ՔԱՂԱՔԱՑԻ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն Աննա Խաչատրյանն ահազանգում է, որ, ապրելով իր իսկ սեփական երկրում, լինելով լիակատար քաղաքացի, պաշտպանված չի զգում իրեն այստեղ:

Իր ամուսինը՝ Արմեն Դաբաղյանը, տարել է սրտամկանի սուր ինֆարկտ, որի համար նրա մարմնում տեղադրել են 2 ստենդ: Առաջինը տեղադրել են 2022 թվականին, երբ շտապօգնության մեքենայով տարել են «Աստղիկ» ԲԿ. ստենդը տեղադրել են անվճար: Իսկ արդեն երկրորդ անգամ անհրաժեշտ է եղել այս տարի՝2024 թվականին. Ա. Խաչատրյանը կրկին զանգահարել է շտապօգնություն, որ իր ամուսնուն տանեն հիվանդանոց եւ տեղադրեն ստենդը:

Շտապօգնության մեքենայով Ա. Դ.-ին տեղափոխել են «Աստղիկ» ԲԿ, քանի որ այնտեղ ազատ տեղ չի եղել, տեղափոխել են «Արմենիա» ԲԿ, որտեղ էլ ստենդի համար պահանջել են 900 հազար դրամ եւ ասել են՝ մինչեւ գումարը չլինի, չենք կարող իրականացնել վիրահատությունը:

Կինը՝ Աննա Խաչատրյանը ստիպված է եղել կարճ ժամանակում վարկ վերցնել: Վճարել են գումարը, նոր կատարվել է վիրահատությունը:

«Ես շատ զարմացա. ստացվում է, որ օրենքն ասում է՝ եթե չես կարողանում վճարել, ուրեմն մարդը պետք է մեռնի՞, իսկ ինչի՞ համար են այդ հիվանդանոցները, միայն օլիգարխների՞, որ փող ունեն... մնացածն ապրելու իրավունք չունի՞»,- վրդովված ասում է նա:

Տիկին Աննայի խոսքով՝ «առաջին ստենդից հետո 1 տարի ամուսնուն թոշակ են տվել, դրանից հետո դա էլ են կտրել՝ ասելով, թե լավ է արդեն:

«Ուզում եմ հասկանալ՝ մի հիվանդանոցում մի մոտեցում է գործում, մյուսում՝ ա՛յլ», - նշում է նա:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց առողջապահության նախարարի մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանի հետ՝ մեկնաբանություն լսելու նպատակով. «Եթե խոսքը սրտի անհետաձգելի վիրահատության ծրագրի մասին է, ապա պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններում՝ ամբողջ բնակչության շրջանում (անկախ սոցիալական կարգավիճակից եւ տարիքային խմբից) գործում է: Ծրագիրը սրտամկանի սուր ինֆարկտի դեպքում ապահովում է դեղապատ ստենդի տեղադրումն անվճար, իսկ աորտա-կորոնար շունտավորումը՝ արտոնյալ պայմաններով:

Սրտի անհետաձգելի վիրահատությունների կազմակերպումն իրականացվում է իշեմիայի ախտանիշների կլինիկական դրսեւորումից 12 ժամվա ընթացքում՝ ներառյալ ախտորոշումը ճշտելու եւ պացիենտին տեղափոխելու ժամանակահատվածը: Ուզում եմ նաեւ նշել, որ սրտի անհետաձգելի վիրահատություն իրականացնելու լաբորատոր-գործիքային ցուցանիշներն կան: Օրինակ՝ սրտամկանի սուր ինֆարկտ»-ին բնորոշ կլինիկական ախտանիշներ, էլեկտրասրտագրի վրա ST սեգմենտի ավելի քան 1մմ էլեւացիա երկու եւ ավելի արտածումներում կամ, օրինակ, արյան մեջ տրոպոնինի կամ բարձր զգայունության տրոպոնինի > 100 նգ/լ ցուցանիշ եւ այլն: Դա բժիշկն է հստակեցնում: Ես այսպես չեմ կարող ասել, թե քաղաքացու մոտ ինչ խնդիր է: Եթե որեւէ բան չի բավարարում նրան, խնդրանքս է՝ թող զանգահարի մեր թեժ գծին կամ ներկայացնի իր բոլոր թղթերը նախարարութուն՝ հասկանանք»,- ասաց նա:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԲԱՑՎԻ «ԱՐՄԱԹ» ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՈՑԸ

Երեկ՝ սեպտեմբերի 23-ին, Երեւանի թիվ 106 հիմնական դպրոցում տեղի ունեցավ 650-րդ «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի պաշտոնական բացումը:

Աշխատանոցը ստեղծվել է «Վարդանանց ասպետներ» կազմակերպության օժանդակությամբ:

«Արմաթ» ծրագիրը իրականացնում է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը՝ սկսած 2012-ից:

Ծրագրի նպատակն է հնարավորություն տալ դպրոցականներին ստանալ բարձր տեխնոլոգիական կրթություն եւ կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում:

«Վարդանանց ասպետներ» կազմակերպությունը ստեղծվել է 1916 թվականին Ֆիլադելֆիայում:

Այն օժանդակում է մշակութային, կրթական, մարզական եւ բարեգործական հաստատություններին, ինչպես նաեւ իր հանգանակած միջոցներով հայրենիքում զբաղվում է դպրոցների նորոգմամբ ու բարեկարգմամբ, կրթաթոշակներ է տրամադրում Հայաստանում սովորող ուսանողներին:

ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ՇՐՋԱՅՑ ԵՆ ԱՐԵԼ ՄԱՐԳԱՐԱՅԻ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանը Մարգարայի անցակետում հյուրընկալել է ԵՄ երկրների դեսպաններին: Կոմիտեի նախագահը եւ ԵՄ երկրների դեսպանները շրջայց են կատարել Մարգարայի անցակետի տարածքում:

Շրջայցի ընթացքում ներկայացվել են անցակետի ենթակառուցվածքների արդիականացումը, ինչպես նաեւ սահմանային հսկողություն իրականացնելու առանձնահատկությունները: Հյուրերը շրջել են Մարգարայի անցակետի սպասարկման սրահում, ծանոթացել են կառուցված խոր զննման անգարին, բեռների ձեւակերպման համար նախատեսված տաղավարներին, պահեստին, ավտոկայանատեղիներին եւ բարեկարգված հրապարակին, ինչպես նաեւ այլ ենթակառուցվածքներին, որոնք հագեցած են ժամանակակից տեխնիկական սարքավորումներով եւ կառուցված միջազգային չափանիշներին համահունչ:

Մարգարայի մաքսակետում, ինչպես Հայաստանի մյուս անցակետերում, պետական սահմանային հսկողությունը նախատեսվում է իրականացնել սահմանային համալիր կառավարման սկզբունքի հիման վրա՝ «մեկ պատուհան» համակարգով:

Միաժամանակ, այցի ընթացքում ներկայացվել են մաքսային բարեփոխումների հիմնական ուղղությունները, այդ թվում՝ առեւտրի դյուրացումը, թվայնացումը եւ ենթակառուցվածքների արդիականացումը, ինչպես նաեւ միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերն ու արձանագրված ձեռքբերումները: ԵՄ դեսպանները, կարեւորելով ԵՄ-ՊԵԿ համագործակցությունը եւ ներդրված համատեղ ջանքերը, գոհունակություն են հայտնել անցակետում կատարված աշխատանքներից:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 40 պատահար. 2 մարդ զոհվել է, 63-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Ես՝Գագիկ Գեւորգյանս, կորցրել եմ Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված ծառայողական՝ թիվ 0129 վկայականս: Գտնողին խնդրում եմ կապ հաստատել 091 806 965 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Մանուշակ Անդրուշի Մարտիրոսյանս, տարիներ առաջ կորցրել եմ Լենինականի երկաթուղային տրանսպորտի տեխնիկումի (այժմ «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ») թիվ ԼՏ N 001782 դիպլոմս, գրանցման թիվ՝ 1015, 29.06.1987թ.:

Գտնողին խնդրում եմ զանգահարել 077 585 124 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

«ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում շարունակվելու է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի աճուրդի փուլերը հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում՝30.09.2024 թ.-ին՝ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր նույն վայրում նույն ժամին:

- Ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ծիծեռնակաբերդի խճուղի, 1/2 շենք, 155 հասցեում գտնվող 83,64 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 63150000 ՀՀ դրամ:

Աճուրդի ավարտը՝30.12.2024 թ.-ին:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ

ՀՀ վիճակագրական կոմիտեն ներկայացրել է 2024 թ.-ի հուլիսի դրությամբ Երեւան քաղաքի բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գներն ըստ վարչական շրջանների:

Բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով շուկայական միջին գինը Կենտրոն վարչական շրջանում 2024 թ.-ի հուլիսին կազմել է 900,000 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 7.98% աճ:

Արաբկիր վարչական շրջանում՝628,500 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 7.1% աճ:

Դավթաշեն վարչական շրջանում՝ 476,000 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 11.3% անկում:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 438,500 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 9.1% աճ:

Աջափնյակ վարչական շրջանում՝ 412,000 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 8.4% աճ:

Էրեբունի վարչական շրջանում՝ 407,000 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 8.5% աճ:

Շենգավիթ վարչական շրջանում՝ 400,000 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 9.6% աճ:

Ավան վարչական շրջանում՝ 398,000 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 8.7% աճ:

Նոր Նորք վարչական շրջանում՝ 398,000 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 10.2% աճ:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 390,200 դրամ: 2023թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 5.8% աճ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՔՍՖՈՐԴԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԻԶՆԵՍ ԱԿՈՒՄԲ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ WCIT2024/DigiTec-Ի ՀԵՏ

Հայաստանի Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) փոխըմբռնման հուշագիր (MoU) ստորագրեց Հայաստանի Օքսֆորդի շրջանավարտների բիզնես ակումբ ՀԿ-ի հետ՝ համագործակցելու 2024թ. Նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսի՝ WCIT2024/DigiTec-ի շրջանակներում միջազգային կրթական փորձի, նորարարությունների եւ առաջնորդության շուրջ փոխգործակցության նպատակով:

Հուշագիրը ստորագրեցին ԱՏՁՄ նախագահ Ալեքսանդր Եսայանը եւ Հայաստանի Օքսֆորդի շրջանավարտների բիզնես ակումբ ՀԿ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ալեքսանդր Շաղիկյանը:

«Շատ շնորհակալ ենք այս հնարավորության համար: Մեզ համար մեծ պատիվ է լինել WCIT-ի նման միջազգային ճանաչում ունեցող միջոցառման գործընկերը: Վստահ ենք, որ այս համագործակցությունը կնպաստի միջոցառման ճանաչելիության բարձրացմանը եւ միջազգային տեղեկատվական ու բիզնես միջավայրի ակտիվ ներգրավմանը»,-ասաց Հայաստանի Օքսֆորդի Շրջանավարտների Բիզնես Ակումբ ՀԿ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ալեքսանդր Շաղիկյանը:

Հուշագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն՝ ՀՀ-ում առաջատար տեխնոլոգիաների զարգացմանն աջակցելու, կրթական ծրագրերի եւ վերապատրաստումների իրականացման, ինչպես նաեւ փոխադարձ փորձագիտական աջակցության տրամադրման ուղղություններով:

«Մենք շատ ենք կարեւորում այս համագործակցությունը, քանի որ այն ակտիվացնելու է այդ թվում՝ միջազգային փոխգործակցությունն այլ երկրներում գործող Օքսֆորդի շրջանավարտների բիզնես ակումբների միջեւ: Նմանատիպ համագործակցությունները նպաստում են նաեւ հայաստանյան տեղեկատվական ոլորտի նկատմամբ միջազգային մեդիայի հետաքրքրության մեծացմանն ու պարբերական անդրադարձներին»,-ասաց Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) նախագահ Ալեքսանդր Եսայանը:

WCIT2024/DigiTec-ը կանցկացվի 2024 թվականի հոկտեմբերի 4-7-ը Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ «ՄՏՔԻ ՈՒԺԸ. Արհեստական Բանականությունը Սահմաններից այն կողմ՝ էթիկայի շրջանակներում» խորագրով:

Չորս օրերի ընթացքում, WCIT2024/DigiTec-ը Հայաստանը կդարձնի տեխնոլոգիական մտքի կենտրոն՝ դառնալով հարթակ ոլորտի առաջատար համաշխարհային խոսնակների ելույթների, պանելային քննարկումների եւ B2B հանդիպումների համար: Համաժողովի շրջանակներում կանցկացվի նաեւ WITSA World Cup ստարտափների մրցույթը շուրջ 20 երկրներից ընտրված ստարտափների շրջանում, կներկայացվեն նորարարական ցուցադրություններ, բիզնես ներկայացումներ, սեմինարներ եւ այլ միջոցառումներ:

WCIT2024/DigiTec համաժողովը կդառնա գլոբալ հարթակ, որը նպատակ ունի՝

- ներկայացնելու հայաստանյան, եւ ոչ միայն, տեխնոլոգիական ներուժը «Դիջիթեք էքսպոյի» շրջանակում, որը հանդիսանալու է հիմնական էքսպո հարթակը WCIT2024/DigiTec համար,
- ուժեղացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը, իրազեկելու նորարարարությունների ու ԱԲ-ի վերջին եւ ապագա զարգացումների շուրջ,
- Հայաստանը ներկայացնելու միջազգային հարթակներում եւ դիրքավորելու որպես նոր տեխնոլոգիական հաբ տարածաշրջանի համար,
- խթանելու ներդրումները եւ ընդգծելու ՏՀՏ լուծումների կարեւորությունը տարբեր տարածաշրջաններում եւ տնտեսություններում:

Համաժողովի օրակարգը ընդգրկում է լայն աշխարհագրությամբ մասնակիցներ՝ ավելի քան 2,000 միջազգային պատվիրակներ կայցելեն Հայաստան միջոցառման օրերին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Արարատի մարզ, համայնք Վ. Արտաշատ, Երեւանյան փողոց, 2 հասցեում գտնվող 360,3 ք.մ. բնակելի տուն, 5,2 քմ մառան եւ 0,131 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝38960000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Երկաթուղայինների փողոց, 13 շենք, 11 հասցեում գտնվող 52,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18050000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս, գյուղ Նոր Խարբերդ, 1-ին փողոց, 16/4 հասցեում գտնվող 78,4 քմ բնակելի տուն, 6,7 քմ ինքնակամ շինություն եւ 0,03059 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝22160000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, Եղվարդ ք., Սաֆարյան փողոց, 5-րդ նրբանցք, 5 հասցեում գտնվող 369,5 ք.մ. բնակելի տուն, 43,68 քմ ավտոտնակ, 19,2 քմ անասնաշենք, 16,8 քմ ծածկոց, 6,48 քմ կաթսայատուն, 27,28 քմ մառան եւ 0,091 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 50080000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 33 շենք, 10 հասցեում գտնվող 70.6 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝27580000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Լեփսիուսի փողոց, 6 շենք, 16 հասցեում գտնվող 73,9 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝35900000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., Ռումինական փողոց, 27 շենք, 1 հասցեում գտնվող 94,5 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12900000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Սիսիան, Սիսիան ք., Չարենցի փողոց, 4 շենք, 17 հասցեում գտնվող 65,39 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11940000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Չերկասի փողոց, 4 շենք, 75 հասցեում գտնվող 87.1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝10000000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Քաջարան ք., Շահումյան փողոց, 6 շենք, 25 հասցեում գտնվող 74,9 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15350000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Նոր-Նորքի 7-րդ միկրոշրջան, 53 շենք, 12 հասցեում գտնվող 77,49 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝31870000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Պուշկինի փողոց, 40 շենք, 54 հասցեում գտնվող 97,1 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝80500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Գ. Նժդեհի փողոց, 27/2 շենք, 44 հասցեում գտնվող 70,28 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝37310000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Օգոստոսի 23-ի փողոց, 19 շենք, 37 հասցեում գտնվող 78,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝31640000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Թանգուն ձոր թաղամաս, 9 հասցեում գտնվող 254 ք.մ. բնակելի տուն, 2 քմ /4,6 խմ/ պարիսպ եւ 0,0397 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝22300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Շոպրոնի փողոց, 8 շենք, 13 հասցեում գտնվող 61,44 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝26280000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Պ. Տիչինայի փողոց, 320/5 հասցեում գտնվող 96,07 քմ թիվ 56 նախագծային բնակարան /գրավի առարկա է հանդիսանում 96,07 քմ մակերեսով թիվ 56 նախագծային բնակարանի նկատմամբ գնելու իրավունքը/: Լոտի մեկնարկային գինը՝ 46700000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Արցախի փողոց, 22 շենք, 11 հասցեում գտնվող 57,33 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝29800000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր, Արմավիր ք., Հանրապետության փողոց, 98 հասցեում գտնվող 325,2 ք.մ. բնակելի տուն, 51,5 ք.մ. ավտոտնակ, 24,4 քմ լողավազան, 4,1 ք.մ. /10,66 խմ, 24,8 գծամետր/ պարիսպ, 48,7 քմ ծածկ եւ 0.0925 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 49060000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Պուշկինի փողոց, 38/1 շենք, 2 հասցեում գտնվող 115,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝115400000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Քասախ, Վարդանանց 1-ին փողոց, 5/1 հասցեում գտնվող 115,71 ք.մ. բնակելի տուն եւ 0,0356 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝37600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի ք., Շահումյան թաղամաս, 8 շենք, 11 հասցեում գտնվող 67,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝9500000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի ք., Սանահին Սարահարթ թաղամաս, Գայի փողոց, 1/3 հասցեում գտնվող 400.7 ք.մ. մակերեսով տարածք: Լոտի մեկնարկային գինը՝32200000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 4 հասցեում գտնվող 236,5 ք.մ. բնակելի տուն, 6,35 քմ մառան, 7,33 քմ մառան, 2,72 քմ կաթսայատուն, 16,43 քմ ավտոտնակ, 16,43 քմ ավտոտնակ, 14,79 քմ անասնաշենք եւ 0,0907 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝22500000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 10.10.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 11.11.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք փոխհամաձայնեցված ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԽՈՍՈՂ ԿՏԱՎՆԵՐ

ՔՈՉԱՐԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՄԱՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐԸ

«Խոսող կտավներ» ներառական նախագծի շրջանակում ստեղծվել են Երվանդ Քոչարի ձեւավորած «Սասունցի Դավիթ» էպոսի 7 պատկերազարդման շոշափելի կրկնօրինակները: 1939-ին Քոչարը ձեւավորել է «Սասունցի Դավիթ» էպոսի հոբելյանական հրատարակչությունը. գուաշով ստեղծված 7 նկարը Վարդեսը գծագրել է բարեհարթանդակների տեսքով՝ «Կռիվը առյուծի հետ», «Սասունցի Դավիթը ձիու հետ», «Դավիթը ոսկու կոտով խփում է Կոզբադուն», «Դավիթը ձիու վրա», «Դավիթը հոտաղ», «Դավթի կռիվը Մուրա Մելիքի հետ», «Քերդի անվանադրումը»:

«Խոսող կտավներ» ներառական նախագծի շրջանակում ստեղծված շոշափելի նկարը կտավի ռելիեֆային պատկերն է, որը պատրաստվում է հիպոալերգեն պլաստիկից: Պատկերը կկարողանան «տեսնել» կույր եւ տեսողության հետ խնդիրներ ունեցող մարդիկ:

Շոշափելի պատկերազարդը ապահովված է տիֆլոմեկնաբանությունով (7 կտավի ձայնագրված նկարագրությունով. զուգահեռ ընթերցվում է նաեւ էպոսի այն հատվածը, որը ներկայացված է պատկերում), Բրայլի այբուբենով ներկայացված տեղեկատվությամբ, QR-կոդով՝ YouTube-յան ալիքում տեղադրված տիֆլոմեկնաբանության հղումով:

Տիֆլոմեկնաբանությունները ձեւավորվում են համապատասխան երաժշտությամբ. նախագծի հնչյունային ռեժիսորն է Վահան Նահապետյանը, ով, պատկանելով նախագծի թիրախային խմբին, հանդես է գալիս նաեւ որպես նախագծի գլխավոր փորձագետ:

Տիֆլոմեկնաբանությունները կարդում է Բաբկեն Չոբանյանը:

Նախագծի արդյունքում ստեղծված շոշափելի պատկերազարդումները փոխանցվել են Երվանդ Քոչարի թանգարանին: Նախագիծն իրականացնում է «Սարեր» մշակութային հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ Երվանդ Քոչարի թանգարանի հետ համագործակցությամբ:

««Խոսող կտավներ» ներառական նախագծի գլխավոր նպատակը տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց բարձր կերպարվեստի աշխարհ ներգրավելն է: Մենք ուզում ենք կույր եւ թույլ տեսողություն ունեցող մարդկանց հնարավորություն ընձեռել՝ ծանոթանալու կերպարվեստին, օգնել նրանց «տեսնելու» հայ վիզուալ արվեստի վարպետների գլուխգործոցները, լսել եւ պատկերացնել նկարին եղած ամեն մանրամասները, որոնք նրանք չեն կարող տեսնել իրենց աչքերով: Մենք ուզում ենք, որպեսզի մեր՝ տեսողությունից զուրկ հայրենակիցները, այցելելով պատկերասրահները, իրենց դուրս մնացած չզգան մի հասարակությունից, որը հաշվի չի առնում իրենց իրավունքը՝ «տեսնել» նկարները հաշմանդամություն ունեցող անձին հասու միակ միջոցով՝ մատներով դիպչելով հայտնի նկարի շոշափելի պատճենին եւ տիֆլոմեկնաբանությունը լսելով»,- նշում է «Սարեր» մշակութային հասարակական կազմակերպության նախագահ Էռնա Ռեւազովան:

Նշենք, որ նախագծի շրջանակում արդեն իսկ ստեղծվել են Ալեքսանդր Թամանյանի «Երեւան քաղաքի գլխավոր հատակագծի» շոշափելի կրկնօրինակը, Մարտիրոս Սարյանի վեց գործերի՝ Պանո «Հայաստան», «Արագած», «Կոստանդնուպոլսի շները», «VII դարի Կարմրավոր եկեղեցին. Աշտարակ», «Դեպի աղբյուր», «Երեւանյան բակը գարնանը» շոշափելի կրկնօրինակները, ինչպես նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուից 6 գլուխգործոցի շոշափելի կրկնօրինակներ. «Սեւանի Աստվածամայր» (անհայտ հայ նկարիչ), «Հայաստան» (Մարտիրոս Սարյան), «Հացը լեռներում» (Գրիգոր Խանջյան), «Խնոցի» (Մինաս Ավետիսյան), «Կոմիտաս. Վերջին գիշերը» (Սարգիս Մուրադյան) եւ «Սալոմե» (Վարդգես Սուրենյանց): Նախագիծը շարունակում է իր ընթացքը:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը 5 տարով ընդգրկվել է Համաշխարհային հակադոպինգային գործակալության Հիմնադրամի խորհրդի (WADA Foundation Board) կազմում:

Հետխորհրդային երկրների շրջանում Հայաստանը WADA-ի Հիմնադրամի խորհրդում ներկայացված առաջին պետությունն է:

«Առաջարկը ստացել եմ WADA-ի նախագահ Վիթոլդ Բանկայից: Համաշխարհային հակադոպինգային գործակալությունը բարձր է գնահատում ՀՀ կառավարության վերաբերմունքը դոպինգի դեմ պայքարում, օրենսդրական դաշտում արված փոփոխություններն ու բյուջեի ավելացումը: WADA-ում տեսնում են, որ մենք մաքուր սպորտի կողմնակից ենք եւ այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ ենք իրականացնում: Թե՛ մեր պետության, թե՛ անձամբ ինձ համար մեծ պատիվ է ներկայացվել Համաշխարհային հակադոպինգային գործակալության հիմնադրամի խորհրդում»,- ասել է Կարեն Գիլոյանը՝ ընդգծելով, որ ուժերի ներածին չափով նպաստելու է մաքուր սպորտի տարածմանը:

«ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ» ՍԻՄՖՈՆԻԿ ՊՈԵՄԸ

Սեպտեմբերի 23-ին՝ ժամը 19:30-ին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը եղել է Արամ Խաչատրյան համերգասրահում՝ «Արմենիա» միջազգային երաժշտական 8-րդ փառատոնի երկրորդ համերգին: Ծրագրում հնչեցին թավջութակի համար գրված երկու ստեղծագործություններ՝ Ալեքսեյ Շորի Թավջութակի թիվ 1, Կամիլ Սեն-Սանսի Թավջութակի կոնցերտները, որոնք Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ կատարեցին գերմանացի հայտնի թավջութակահար Մաքսիմիլիան Հորնունգը:

Ուշագրավ է, որ «Արմենիա» միջազգային փառատոնի համերգային ծրագրերում իրենց ուրույն տեղն ունեն նաեւ հայ կոմպոզիտորական արվեստի ներկայացուցիչները. համերգային յուրաքանչյուր օր ունկնդիրը կարող է վայելել հայկական դասական երաժշտության ստեղծագործություններ:

Սեպտեմբերի 23-ի համերգին երաժշտասերները ունկնդրեցին նաեւ Էդվարդ Միրզոյանի «Լոռեցի Սաքոն» սիմֆոնիկ պոեմը: Այն հազվադեպ է հնչում եւ հայ կոմպոզիտորական արվեստի լավագույն նմուշներից է: Էդվարդ Միրզոյանը «Լոռեցի Սաքոն» սիմֆոնիկ պոեմը գրել է երիտասարդ տարիքում: 1941 թվականին կոմպոզիտորն այն ներկայացրել է որպես կոնսերվատորիայի ավարտական դիպլոմային աշխատություն:

«Լոռեցի Սաքոն» սիմֆոնիկ պոեմում հեղինակը հնչյունների միջոցով պատկերել է հայկական գյուղական կյանքն իր կոլորիտով ու գունեղ երանգներով, կերտել Սաքոյի կերպարն ու բացահայտել նրա ապրումները:

Համերգային երեկոն ղեկավարել է Գերմանիան եւ Եգիպտոսը ներկայացնող հայտնի դիրիժոր Նաբիլ Շեհատան:

«Արմենիա» միջազգային երաժշտական 8-րդ փառատոնը կազմակերպել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում, վերջինս իրականացնելու է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող՝ 1500000000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ շարժական գույքի, ինչպես նաեւ՝նույն հարթակում, Կազմակերպիչ «Բի էս Թի» ՍՊԸ-ն իրականացնելու է ստորեւ նշված անշարժ գույքերի բաց աճուրդ: Շարժական գույքը եւ անշարժ գույքը սակարկվելու է որպես մեկ միասնական համալիր՝գործարան-հոսքագծեր:

Սակարկություններն իրականացվելու են «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 18-րդ փողոց, 23 հասցեում գտնվող 2092,49 քմ գլխավոր մասնաշենք, 193,54 քմ հանք անցում, 461,85 քմ հանքանյութի պահեստ, 12,41 քմ էլ-ենթակայան, 248,95 քմ արհեստանոց, 15,69 քմ շինություն, 29,88 քմ պահեստ, 40,53 քմ ենթակայանի շենք, 58,67 քմ արդյունաբերական օբյեկտ, 41,36 քմ հանք անցում, 98,85 քմ նավթամթերքի պահեստ, 7,86 քմ հանք անցում եւ 3,66365 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 1313547000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 18-րդ փողոց, 22 հասցեում գտնվող 106,38 քմ արդյունաբերական օբյեկտ, 89,25 քմ արդյունաբերական օբյեկտներ, 60,72 քմ հանք անցում, 56,62 քմ հանք անցում եւ 0,24334 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15300000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 18 փողոց, 21 հասցեում գտնվող 1,96149 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 10.10.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝30.12.2024թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

● *Հոկտեմբերի 1-ին՝ ժամը 19:30-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «Համլետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է փոխել սոցիալական փաթեթի հաշիվը: Խնդրում եմ ներկայացնել մանրամասն:

Իռա Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ յուրաքանչյուր բյուջետային տարվա սոցիալական փաթեթի գումարների փոխանցման համար լրացվում է նոր դիմում: Սոցիալական փաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Այս դեպքում աշխատողը դիմումի հետ միասին ներկայացնում է նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, ինչպես նաեւ սոցփաթեթի նախկին հաշիվը սպասարկող բանկից տեղեկանք՝ պարտավորություններ չունենալու վերաբերյալ:

Հայտնում ենք, որ սոցիալական փաթեթի հաշիվը փոխելու դեպքում աշխատողն իր հաշվի դրամական միջոցները սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկից սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկ փոխանցելու համար նախկին բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք: Այդ տեղեկանքի հիման վրա սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկն աշխատողի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկի սոցփաթեթի հաշվին:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել կամ փոխանցել ցանկացած ուղղություններով միայն աշխատողի կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու եւ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ կամ աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու դեպքում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվո՞ւմ է արդյոք դրա կրկնօրինակը:

Սարգիս Ստեփանյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի շախմատի կանանց ընտրանու անդամները՝ Էլինա Դանիելյանը եւ Աննա Սարգսյանն առանձին մեդալներ են նվաճել շախմատի համաշխարհային Օլիմպիադայում. Էլինա Դանիելյանը 10 հնարավորից վաստակել է 7.5 միավոր եւ 3-րդ խաղատախտակի վրա նվաճել բրոնզե մեդալ: Աննա Սարգսյանը 10 հնարավորից վաստակել է 8 միավոր եւ 4-րդ խաղատախտակի վրա նվաճել բրոնզե մեդալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 11 +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 +23 + 28
Լոռի	+9 + 14 +23 + 27
Տավուշ	+12+ 17 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15+ 18 +27 + 31

Արարատ	+17 + 20 +33 + 35
Արմավիր	+15 + 18 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+24 + 26 +30 + 32

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*